ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՈՒՆ N 3

«ԱՔ-ԳՀԱՇՁԲ-18-18» ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Արմավիր

02.07.2018թ.
Ժամը 10^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ ԳՊ/ԳԱՊ՝ Ա. Աբգարյանը,
Անդամներ՝
Գնման պատասխանատու ԳՊ/ԳԱ Դ. Ավետիսյանը,
Գնման պատասխանատու ԳՊ/ԳԱ Ն. Դանիելյանը,
Գնման պատասխանատու ԳՊ/ԲԱ Մ. Մանուկյանը,
Գնման պատասխանատու ԳՊ/ԲԱ Ս. Առաքելյանը,
Մրցույթի համակարգող ԳՊ /Միմ Ա. Թաշչյան:

1. Գնանշման հարցման հայտերի գնահատման մասին

1.1 Հանձնաժողովը արձանագրեց, որ «ԱՔ-ԳՀԱՇՁԲ-18-18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման արդյունքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե), հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով տրամադրել է հարցման մասին հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվությամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակից <<ԼՈՒՍԻ-ԱՐԵԳ>> ՍՊԸ-ի հայտով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին: Հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.2 Հանձնաժողովը արձանագրեց, որ «ԱՔ-ԳՀԱՇՁԲ-18-18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ <<ԼՈՒՍԻ-ԱՐԵԳ>> ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին: Հիմք ընդունելով գնահատման թերթիկները հանձնաժողովը որոշեց <<ԼՈՒՍԻ-ԱՐԵԳ>> ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը գնահատել իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Մասնակցի կողմից որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

2.1 Հանձնաժողովը որոշեց, «ԱՔ-ԳՀԱՇՁԲ-18-18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակից <<ԼՈՒՍԻ-ԱՐԵԳ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված սույն հրավերով պահանջվող որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Պայմանագիր կնքելու որոշման հայտարարությունը հաստատելու մասին

3.1 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ԱՔ-ԳՀԱՇՁԲ-18-18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը ժամը և վայրը որոշելու մասին**

4.1 Հանձնաժողովը որոշեց, «ԱՔ-ԳՀԱՇՁԲ-18-18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նիստը հրավիրել պայմանագիր կնքվելու, իսկ սույն ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:00-ին,հասցե՝ քաղաք Արմավիր, Հանրապետության 32:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ ԳՊ/ԳԱՊ _____ Ա. Աբգարյան
Գնման պատասխանատու ԳՊ/ԳԱ _____ Դ. Ավետիսյան
Գնման պատասխանատու ԳՊ/ԳԱ _____ Ն. Դանիելյան
Գնման պատասխանատու ԳՊ/ԲԱ _____ Մ. Մանուկյան
Գնման պատասխանատու ԳՊ/ԲԱ _____ Ս. Առաքելյան
Մրցույթի համակարգող ԳՊ /ՄԻՄ _____ Ա. Թաշչյան